



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 10 » 01 2022թ.

№ 08/ԼԱ/ - 09

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. հունվարի 3-ից 9-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Հունվարի 3-ի և հունվարի 5-ի գիշերը առանձին շրջաններում դիտվել է թույլ ձյուն: Շաբաթվա մյուս օրերին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը դեկտեմբերի եղել է նորմայից բարձր 2-5 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում՝ +16...+18°C, Սյունիքի հովիտներում՝ +14...+17°C, նախալեռներում՝ +11...+16°C, Լոռիում՝ +10...+17°C, Արարատյան դաշտում՝ +8...+9°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +8°C, լեռներում՝ +7°C, Գեղարքունիքում՝ +4...+7°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +4...+8°C, լեռներում՝ +3...+5°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +6°C, լեռներում՝ +4...+6°C, Շիրակում՝ -1...+4°C և Երևանում՝ +6...+7°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է. Շիրակում՝ -8...-14°C (Աշոցքում՝ -23°C), Արագածոտնում՝ լեռներում՝ -14...-15°C, նախալեռներում՝ -5...-6°C Գեղարքունիքում՝ -8...-12°C, (Մասրիկում՝ -22°C), Կոտայքում՝ լեռներում՝ -9...-13°C, նախալեռներում՝ -7°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -13°C, նախալեռներում՝ -6°C, Լոռիում՝ -3...-9°C, Արարատյան դաշտում՝ -6...-12°C, Տավուշում՝ -2...-5°C, Սյունիքի նախալեռներում՝ -5...-12°C, հովիտներում՝ -2...-6°C և Երևանում՝ -5...-9°C:

Շաբաթվա ընթացքում դիտվել է մառախուղ առանձին շրջաններում՝ 50-500մ տեսանելությամբ:

Առանձին օրերին դիտվել է քամու ուժգնացում հասնելով՝ Աշոցքում՝ 20մ/վ, Իջևանում, Տաշիրում, Ստեփանավանում 18մ/վ :

Հունվարի 10-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է. Արագած բ/լ-ում՝ 76սմ, Աշոցքում՝ 26սմ, Հրազդանում 20սմ, Ամասիայում՝ 20սմ, Ջերմուկում 18սմ Ամբերդում՝ 17սմ, մյուս լեռնային շրջաններում մինչև 6-11սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով (02.01.22-09.01.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.42մ (09.01.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 10սմ-ով: